ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Դիտորդական առաքելությունները ընտրական գործընթացում ներգրավվում են որպես հանրային վերահսկողություն իրականացնող սուբյեկտներ, որոնց հիմնական առաքելությունն է ընտրական գործընթացի անկախ, օբյեկտիվ և անաչառ գնահատումը, որոնց հիմնական նպատակն է նպաստել ընտրությունների օրինականության և վստահելիության ապահովմանը: Այդ նպատակի իրագործումը հնարավոր է միայն այն պայմաններում, երբ դիտորդական առաքելությունները և դիտորդները գործում են քաղաքականապես չեզոք և անաչառ: Այդ առաքելության իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դիտորդները պահպանում են քաղաքական չեզոքություն և զերծ մնում ցանկացած գործողությունից կամ հայտարարությունից, որը կարող է ընկալվել որպես աջակցություն կամ ընդդիմություն որևէ քաղաքական ուժի, թեկնածուի կամ քաղաքական դիրքորոշման նկատմամբ:

Դիտորդների քաղաքական չեզոքությունը հանդիսանում է ընտրությունների նկատմամբ վստահության, թափանցիկության և օրինականության ապահովման հիմնարար նախապայման:

Միջազգային չափանիշներ

1. **ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ (OSCE/ODIHR)** Ընտրությունների դիտարկման ձեռնարկի համաձայն՝

դիտորդական առաքելությունները պարտավոր են.

- գործել անկախ և անաչառ,
- զերծ մնալ քաղաքական գնահատականներից ընտրական գործընթացի ընթացքում,
- չմիջամտել ընտրությունների կազմակերպմանը կամ քաղաքական մրցակցությանը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական մեթոդաբանությունը հստակ նշում է, որ դիտորդների ցանկացած քաղաքական կողմնակալություն խաթարում է դիտորդության վստահելիությունը և հակասում է նրանց մանդատին: Դիտորդական առաքելության

մանդատը չի ներառում քաղաքական գնահատականների հրապարակային արտահայտում ընտրական գործընթացի ընթացքում:

ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթուղթն ամրագրում է ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ապահովման անհրաժեշտությունը, ինչը ենթադրում է, որ ընտրական գործընթացում ներգրավված ոչ պետական դերակատարները գործում են առանց քաղաքական կողմնակալության: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ պրակտիկայում քաղաքական չեզոքության խախտումը դիտարկվում է որպես դիտորդության արժանահավատությունը նվազեցնող գործոն:2

2. **«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն (Վենետիկի հանձնաժողով)** իր «Ընտրական հարցերում լավագույն փորձի կանոնագրքում» ամրագրել է որ.

- ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողությունը պետք է իրականացվի անկախ և չեզոք սուբյեկտների կողմից,
- դիտորդական կառույցները պետք է գործեն այնպես, որպեսզի չազդեն ընտրությունների արդյունքների կամ քաղաքական մրցակցության վրա,
- դիտորդները չպետք է հանդես գան որպես քաղաքական դերակատարներ և պարտավոր են խուսափել ցանկացած վարքագծից, որը կարող է ազդել ընտրողների կամ ընտրական մարմինների վրա:

Դիտորդների քաղաքական չեզոքությունը դիտվում է որպես ազատ և արդար ընտրությունների ինստիտուցիոնալ երաշխիք:

3. ՄԱԿ-ի միջազգային ընտրական դիտորդական առաքելության սկզբունքների հռչակագրի համաձայն՝ դիտորդական առաքելությունները պարտավոր են պահպանել անկախություն, անաչառություն, քաղաքական չեզոքություն: Դիտորդները պարտավոր են չմիջամտել ընտրական գործընթացին և չարտահայտել քաղաքական աջակցություն կամ ընդդիմություն:

Ընտրությունների ոլորտում մասնագիտացած միջազգային կառույցների չափանիշներով[1]՝ քաղաքական առումով կողմնակալ կամ կեղծ դիտորդություն է համարվում ընտրությունների դիտարկումն այնպիսի խմբերի և անձանց կողմից, որոնք անկախ չեն, հետապնդում են քաղաքական նպատակ և շահագրգիռ են

[1] https://epde.org/fake-observation/

կոնկրետ արդյունքներով: Կողմնակալ կամ կեղծ դիտորդությունն, ըստ էության, քաղաքական գործունեության ձև է, որն ուղղված է քաղաքական գործիչների ու քաղաքական ուժերի շահերն առաջ մղելուն՝ ընտրական գործընթացների ընթացքում վստահելի դիտորդության իմիտացիայի միջոցով: Ի տարբերություն անկախ ու անկողմնակալ դիտորդների՝ կեղծ դիտորդական խմբերը ցուցաբերում են նվազ թափանցիկություն, անտեսում են միջազգային չափանիշները: Դրանք հաճախ չունեն ընտրությունների դիտարկման կուռ մեթոդաբանություն, չեն հրապարակում դիտորդական զեկույցներ կամ տրամադրում են ձևական ու կողմնակալ զեկույցներ: Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի (EPDE) չափանիշների համաձայն՝ կեղծ դիտորդները կենտրոնանում են ոչ ժողովրդավար ռեժիմների համար կեղծ լեգիտիմություն ստեղծելու վրա՝ խաթարելով արդար և ժողովրդավարական ընտրությունների ապահովման ջանքերը: Դրանց նպատակն է լեգիտիմացնել թերի ընտրությունները կամ ընդհակառակը՝ նսեմացնել ազատ ընտրությունները, խաթարել ընտրական հաստատությունների ու ժողովրդավարական ընտրությունների հեղինակությունը: Այսպիսի դիտորդական առաքելությունները փորձում են չեզոքացնել վստահելի կազմակերպությունների և անկախ դիտորդների կարծիքները:

ՀՀ օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացի իրավական կարգավորումը հիմնված է ազատ, արդար, թափանցիկ և մրցակցային ընտրությունների սկզբունքների վրա: Այդ գործընթացում դիտորդական առաքելությունները ներգրավվում են որպես անկախ և ոչ քաղաքական սուբյեկտներ, որոնց նպատակն է իրականացնել ընտրական գործընթացի հանրային վերահսկողություն:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն՝ դիտորդական առաքելության իրավունք ունեն ՀՀ այն կազմակերպությունները, որոնք, ի թիվս այլնի, չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին: ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դիտորդն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ: Դիտորդի այդ իրավական կարգավիճակից

անմիջականորեն բխում է նրա քաղաքական չեզոքության պարտականությունը: ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածն արգելում է դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին զբաղվել նախընտրական քարոզչությամբ:

Դիտորդի կողմից քաղաքական դիրքորոշման հրապարակային արտահայտումը կարող է գնահատվել որպես թաքնված կամ անուղղակի քարոզչություն, ինչը հակասում է ընտրական օրենսդրությանը:

Միջազգային չափանիշների և ՀՀ օրենսդրության վերը նշված դրույթների վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ դիտորդական առաքելությունների քաղաքական չեզոքությունը հանդիսանում է իրավական պարտականություն, քաղաքական կողմնակալությունը անհամատեղելի է դիտորդի կարգավիճակի հետ, չեզոքության խախտումը կարող է դիտվել որպես ընտրական գործընթացին անուղղակի միջամտություն:

ՀՀ օրենսդրությունը, սակայն, բավարար մեխանիզմներ չի սահմանում դիտորդական առաքելությունների և դրանցում ներգրավված դիտորդների՝ քաղաքական չեզոքության և անկողմնակալության պարտականության կատարման ապահովման համար: Ներկայացված նախագիծը միտված է օրենսդրության նշված պահանջի և միջազգային չափանիշների կատարման ապահովմանը:

Ներկայացված նախագիծը, մասնավորապես, հստակեցնում է թե ինչ չափանիշների պետք է բավարարի Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվող ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու հնարավորություն ստանալու համար: Նախագծում նաև ընդգծվում է դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների գործունեության թափանցիկության, այդ թվում՝ ֆինանսական թափանցիկության անհրաժեշտությունը՝ ելնելով այն տրամաբանությունից, որ ընտրությունների թափանցիկության ապահովման նպատակ ունեցող սուբյեկտները նույնպես պետք է թափանցիկ և հաշվետվողական լինեն հանրության առաջ:

Նախագիծը նաև հստակեցնում է հավատարմագրման դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնելու կարգը:

Նախագծով տարանջատվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների կողմից հավատարմագրվող ՀՀ քաղաքացիություն ունեցող և ՀՀ քաղաքացիություն չունեցող դիտորդների հավատարմագրման համար օրենքով սահմանված ժամկետները: Մասնավորապես՝ սահմանվում է, որ ՀՀ քաղաքացիություն չունեցող դիտորդների հավատարմագրման համար դիմում կարող է ներկայացվել ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 15 օր առաջ: Նշված կարգավորման անհրաժեշտությունը բխում է ազգային անվտնագության շահերից:

Նախագծով նաև հստակեցվում են դիտորդական առաքելության, հավատարմագրման դիմումի մերժման հիմքերը, ինչպես նաև դիտորդական առաքելության, ինչպես նաև դրանցում ներգրավված դիտորդների հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչվելու հիմքերը, որի նպատակը նույնպես դիտորդական առաքելության քաղաքական չեզոքության չափանիշներին բավարարելու պարտականության ապահովումն է:

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքն է ապահովել ընտրական գործընթացներում դիտորդական առաքելությունների և դրանցում ներգրավված դիտորդների՝ ընտրությունների օրինականության և վստահելիության ապահովմանը նպաստելու առաքելության կյանքի կոչումը, ինչպես նաև ՝ բարելավել Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ընտրությունների գործընթացը դիտարկող դիտորդական առաքելությունների գործունեության թափանցիկության և անաչառության ապահովման օրենսդրական կառուցակարգերը: